

Տարեկան գինը 10 բուր, կէս տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացի դիմում են ուղղակի
Կոպէկով. Редакция «Мир»

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Շուշուգ: Նա-
մակ խմբագրին: Ներքին լուրեր: — ԱՐՏԱՐԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուրեր: — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: —
ՀԱՌԱՎԱՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: —
ԲԱՆԱՐԱՐԱԿԱՆ: Խաչագործի յիշատակարան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Մարտի 5-ին

Չորս տարուց աւել է, որ Վարդապետի վիճա-
կում հաստատուեցաւ թեմական տեսչի պաշտօնը,
որով հոգ, կառավարութիւնը նպատակ ունի տե-
ւի կանոնադրել ժողովրդական կրթութեան գործը
քաղաքներում և գիւղերում: Մեր թեմի զանազան
տեղերում բացվեցան բազմապատկեր տարրական
ուսումնարաններ, որոնց համար կազմվեցան հար-
կաւոր պրոգրամներ, կանոններ և այլն: Սակայն
այս շրջա տարուց ընթացքում այդպիսի եռան-
դով սկսված գործը չը ցոյց տուեց ոչ մի քիչ կամ
շատ շօշափիլի առաջադիմութիւն և այդ նորու-
թիւնը իր համեմատաբար զարգացած երկրատար
ուսուցիչներով, նոր մանկավարժական մեթոդով
չը կարողացաւ ակնեւն ցոյց տալ իր առաւելու-
թիւնը հին տարրական կարգերէն: Բացված ու-
սումնարաններէն շատերը ենթարկվեցան խիստ
վաղաժամ վախճանի, մի քանիսն ընդհանրապէս
դեռ չարժանանում են գիտաւոր աստղերի կեան-
քին նման իրանց գոյութիւնը, երբեմն մարում են,
երբեմն էլի երեւում: Հասարակական գործերին
յատուկ անբաւականութիւնները, զանազան միջին
չը կամութիւնները չը թողնեցին մեր այս կերպ
սկսված ուսումնական գործին հանգիստ զարգա-
նալ: Ո՛վ էր այս ամենի պատճառը: Ամենքը նա-
յուր են թեմական տեսչին և միայն նրա անհա-
կան և հոգեկան կարողութիւններին մէջ են որո-
նում գործի աշխուժեցում կամ անաշխուժեցում
պատճառը: Տեղալին հոգ, կառավարութիւնն էլ
համոզված է, որ այժմեան անաշխուժեցում պատ-
ճառն է թեմական տեսչը և այդ իսկ պատճա-
ռով, ինչպէս մեզ հաստատուեցաւ, դիտարկու-
թիւն ունի պաշտօնից արձակել նրան: Կարելի է
կան հանգամանքներ, որոնք արդարացում են
հոգ, կառավարութեան այդ դիտարկումները,
բայց նայելով մեր մէջ եղած տարրական կրթա-
կան գործին միակողմանի և նեղ կերպով, մենք

աչքից զցում ենք աւելի զօրեղ պատճառներ, ո-
րոնք խոչնդոտ են լինում ուսումնական գործի
զարգացումը: Ուսումնասիրելով տեղական կեան-
քը, տեսնելով թէ ինչ հանգամանքներին մէջ է
գրված սկզբնական լուսաւորութեան գործը մեզ
մօտ, խնայելով թէ ինչ կերպ է ընդունում այդ գոր-
ծը ժողովրդի այն մասան, որի համար նա տեղե-
վել է, մենք համոզվում ենք, որ քանի կը շարու-
նակվի գործի այժմեան գրութիւնը, թեմական
տեսչի անհաւանական և հոգեկան ընդունակութիւն-
ները չեն կարող գործի աշխուժեցումը գրաւական
լինել և եթէ այսօր նշանակվի մի ուրիշ՝ աւելի
հմուտ և զարգացած տեսուչ, նա էլի կը տեսնէ
իր առջև այնպիսի արդեւրներ, որոնց դէմ նա
անգոր կը լինի միակ միջոց և ոչնչացնել նրանց:
Մի հարկանցօրէն հայացք մեր թեմի կրթական
գործի վրա, մեր կարծիքով, կարող է արդարաց-
նել մեր յայտնած միտքը:

Թեմական ուսումնարաններն առհասարակ հիմն-
վում են բազմամարդ և հարուստ գիւղերում, ու-
սումնարանի գոյութեան միջոցները, այդպէս բնա-
կաբանը, վառելիքը, ուսման պարագաներն ու
ուսուցչի ուսձիւրը պարտաւոր է հոգալ ամեն մի
ուսումնարանի համար նշանակված հոգաբարձու-
թիւնը՝ գիւղի համայնքի հաշուով: Թեմական տե-
սուչն էլ պարտաւոր է ըստ չափու կարողութեան
չուտ շուտ այցելել ուսումնարանները, կարգի բե-
րել նրանց ու տալ ուսուցչին հարկաւոր հրահան-
քներ: Նա կարող է վարձել և արձակել ուսուցիչ-
ներ, պէտք է հոգայ նրա ուսձիւրի կանոնաւոր և
ամբողջապէս ստանալու համար, մի խօսքով ուսում-
նարանի կարգադրող և կատարող վարչութիւնը
կազմում են՝ տեսուչն ու հոգաբարձութիւնը: Մի
ուրիշ մարդ էլ խառնվում այդ գործին մէջ: Մի-
անգամ կարգի դնելով ուսումնարանը, տեսուչը
գնում է ուրիշ տեղեր նոյն անուր: Ուսումնա-
րանը մնում է գիւղացու խնամքի տակ: Պարզ է,
որ այսպիսի դրութեան մէջ զրկված ուսումնա-
րանը կարող է աւելի զարգանալ և առաջադիմու-
թիւն ցոյց տալ միայն այն ժամանակ, երբ այն
ժողովուրդը, որի մէջ նա ապրում է, կարողու-
թիւն ունի հասկանալ ուսման սրբութիւնն ու ան-
հրաժեշտութիւնը, երբ նա սերտ սիրով կապված
է լինի ուսումնարանի հետ, միացած ուժերով
կօշկէ նրա աշխատանքներին, կապահովանէ
նրա գոյութեան միջոցները: Այլապէս չէ կարելի
յաջողութիւն գոչակել այն հիմնարկութեան, որ
այսպիսի հանգամանքներով կախում ունի ժողո-
վրդի ազատ կամքից, որ չէ կարող ստիպել ա-

ւանց նրան: Հայ, ռուս և վրաց լուսաւորութիւնը
համարեալ ամենայն օր ցոյց է տալիս, որ գիւղական
տարրը, որ կաշկանդված է կոպտութեան ու
տգիտութեան մէջ, չափ և չափ դէպքերում իրան
անհնդունակ է ցոյց տալիս ամեն մի նորութիւն
իր մէջ զարգացնելու համար: Մեզ ամենքիս
յայտնի է այն եսականութիւնը, այն բաժանված
միմեանց չը ճանաչող դրութիւնը, այն խուլա-
սիրութիւնն ու նախանշը, որոնք սպանում են
գիւղի մէջ մտցած ամեն մի լուսաւոր՝ հասարա-
կական շահերին ծառայող հիմնարկութիւն: Մենք
հաստատ տեսնում ենք, թէ ինչպէս անվերջանա-
լի դիտարկութիւններով, կոպտ կամայականու-
թիւններով, նախապաշարմունքներով լի անվճա-
կանութիւններով է ենթարկվում գիւղի մէջ մտած
մի գործ, որին սովոր չէ գիւղացին, որին նա հաս-
կանալ չէ կարողանում և որի համար նա ունի
իր նեղ տեսակետը: Եւ մենք տեսնում ենք, որ
այն գիւղացիների մէջ, որոնք բազմիցս բերմունքով
ազատ են լինում այս տեսակ հասարակական
ախտերից, յաջողութեամբ է մտնում ու զարգա-
նում ամեն մի նորութիւն: Այն սրանց մէջ պէտք
է որոնել այն պատճառները, որոնք ընդդիմա-
դրում են տարրական լուսաւորութեան յաջող
տարածվելուն:

Ինչ կերպով է նայում գիւղացին ուսումնարա-
նին, նա նայում է նրան ինչպէս մի հիմնարկու-
թեան, որ իրանից մեծերը բացել են այն պատճա-
ռով, որ այդպէս են ուղեցել. նա համարեալ բո-
լորովին չի ամբողջապէս կրթի մի օր ուսումնարանը
փակվի, որովհետեւ նրա համար դեռ կան տեղեր
ու տիրացուն, որոնք միշտ պատրաստ են ուս-
ուցում տալ իր որդուն ստանալով անսակաւ մի
լար ցորեն կամ ամենաշատը 20 հատ կոպէկ. նա
պէտք համոզված է, որ առանց կարգաւոր էլ իր
որդին մարդ է և եթէ խելք ունենայ՝ կը հարս-
տանայ. նա չի ուղի իր որդուն տալ լուսաւորու-
թիւն մեր ցանկացած կերպով, քանի որ նրա
պատկերն ու հայրը չեն տեսել այդ ուղած կարգը
և էլի լուսաւորվել են: Նա խիստ անվայել խոր-
թութիւն է համարում մինչև անգամ աշակերտի
հազուստի ձեւի փոխելը: Քանի որ նա այսպէս
է, քանի որ նա չէ կարողանում հաւատալ իր
մտքերի հակառակ կողմին, նա միշտ ուսումնա-
րանի վրա կը նայէ մատերի միջով, նա միշտ
անհոգ կը մնայ նրա մասին: Այս ապակի
պայմաններին մէջ պիտի շարունակէ իր գոյութիւնը
մի հիմնարկութիւն, որին տեղը ինքն այդ սառ-
նախորտ ժողովուրդն է, որը իր զարգացման հա-

մար պահանջում է ժողովրդից ջերմ համերաշխու-
թիւն, կատարեալ համակրութիւն դէպի ինքը:
Գեռ չէ կարողանում ուսումնարանը ազատ շունչ
քաշել և ահա գիւղի մէջ սկսվում են նախանշա-
խնդիր խնդիրներ, չկամութիւններ, կոպտ
վարմունքներ, հակառակ կուսակցութիւններ, վառ-
ված կոյր կրքերով, որոնք մահաբեր են ուսում-
նարանի համար: Մեկը դէպի մի կողմն է ձգում,
միւրը դէպի հակառակ կողմը: Ուսումնարանը
զրկվում է իր ապրելու միջոցներից, ուսուցիչը
մնում է անուշիկ և ահա կատարեալ քաղաքական
թեմական տեսուչը անկարող է այս անկարող-
թիւնների առաջն առնել, մի անհատ, որքան
գործունեայ ու հմուտ լինի, չէ կարող համոզե-
նել, մի տեղ միաւորացնել ժողովրդական մի ահա-
ղին մասան, մի կերպ տրամադրել բազմաթիւ
տարբեր ուղեղներ: Շատ տեղերում առանց տես-
չի խնայելու, ժողովուրդն ինքն է փակում ու-
սումնարանը: Ուսուցիչը իր ուսձիւրը պահանջում է
տեսչից, որը օրինաւոր պայմանագրով պար-
տաւորվել է ուսձիւր լիովին տալ նրան և
միշտ պատասխանատու է այս մասին: Հոգեւոր
կառավարութիւնը չէ ճանաչում ուսուցչին և մի
կոպէկ չէ տալիս նրան. նա նրան ցոյց է տալիս
թեմական տեսչին. «Նա պէտք է քեզ բաւկա-
նայնէ, նա մեզանից ուսձիւր է ստանում այդ բա-
նի համար. նրանից պահանջիր»: Թեմական տե-
սուչը բոլորովին շարաւած է մնում և անկամայ
պէտք է ուսուցչի ուսձիւրի մի մասն իր սեփակա-
նութիւնից տալ, իսկ մի մասը զրկել նրանից, մե-
զանչելով իր խղճի դէմ:

Ահա այսպէս է սկսվում և ընդունվում այն գոր-
ծը, որի տարածելը ժողովրդի մէջ մենք համա-
րում ենք անհրաժեշտ, առանց որի անկարելի է
ժողովրդի բարեւարակութիւնը: Ուրեմն քանի տար-
րական դպրոցը կը շարունակի մնալ ժողովրդի
առանձին առանձին մտքերի, կոպտ՝ զարգաց-
մունքից զուրկ խելքերի ու կրքերի խաղաղը,
մենք չենք ունենայ բարեկարգված ուսումնական-
կրթական գործ: Պէտք է ազատել ուսումնարանը
գոյութեան այդ պայմաններից, պէտք է նրա հա-
մար ստեղծել ուրիշ դրութիւն, և այն ժամանակը
միայն մենք կունենանք լաւ կրթարաններ: Ինչ
կերպ կարելի է հասնել դրան: Այդ թող խնայ
և կարգադրել հոգեւոր կառավարութիւնը, որ միակ
ինիցիատիւն է եղել գիւղական ուսումնարանների
հիմնարկութեան: Թող հոգ, կառ. լաւ հասկանայ, որ
ժողովրդի կամքն զգելով կրթական գործը, ոչինչ
չի առաջադիմ: Գիւղացին սիրում է ամեն մի ձրի

ԽԱՇԱԿՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

2.

ԸՆԿԱՅ ՇՈՒՂԱԿԻ ՄԵՋ

Ես վճեցի երբէք չը վերադառնալ քաւոր Պետ-
րոսի մօտ: Երբ օր էր, որ հօրս խրճիթից դուրս
չէի եկել: Ես դատապարտված էի նոյն վիճակին,
որպէս Նէնէն, — չերեւալ խաչագործներին մինչև
այստեղից հեռանայինք:

Բոլոր ժամանակը ես և հայրս զբաղված էինք
ճանապարհի պատրաստութիւններով: Նէնէն շատ
ուրախ էր, անդադար չտալով ինքնուր ինքն
նանք, գնանք, ասում էր, հեռանանք այստեղից:
Պառաւր Նոյնիս տեսնելով չէր երեւում, նա շուտով
հալածվեցաւ հօրս հետ բաժանվելու մտքի հետ,
կըր իմացաւ, որ նա մի հեռու երկրում կլին ու-
նի, դաւանելու ունի, և ցանկանում էր, որ ծերու-
նին գնայ իր ընտանիքը ուրախացնել: Հայրս իր
խրճիթը բոլոր պարագայքով թողնում էր պա-
ռաւին:

Ամեն ինչ պատրաստ էր ճանապարհի համար,
մնում էր գրաստներ վարձել, տեղափոխվել մին-
չև մերձակայ քաղաքը և այնտեղից փոստայի
ապրանքներով առաջ գնալ: Չորրորդ օրը վաղ-առա-

ւօտեան ես ուղևորվեցայ դէպի մօտակայ գիւղը
գրաստներ վարձելու համար:

Գուրս դառնալ հօրս խրճիթից, դուրս էի իմ մէջ
մի անբացատրելի խաղաղութիւն. իմ սիրտը լը-
ցուած էր անհամարապէս տրակտիւններով, ես ինձ
բախտաւոր էի համարում և գոհ: Կարծես թէ, ես
ազատված լինելի խիստ ծանր շղթաներից, որ
յարաժամ ճնշում էին, յարաժամ տանջում էին
ինձ: Այո, ես ազատված էի քաւոր Պետրոսի կա-
պանքներից, ազատված էի մի անբարոյական
չըջանից...

Ուրպէս մի մարդ, որ դեռ հազիւ զգաստացել է
իր կատաղի արեւելութիւնից, ես մտաբերում էի
իմ սարսափելի անցեալը... տեսնում էի այն խո-
րին անգունը, լցված ամեն տեսակ ապական-
անութիւններով, ուր բարոյապէս ընկած էի ես...
Ո՛վ դուրս հանց ինձ այնտեղից: — Նէնէն և հայրս:
Հայրս սովորեցրեց լինել բարի, իսկ Նէնէն սո-
վորեցրեց սիրել...

Նախախնամութեան մասն էի տեսնում այդ
բոլոր դէպքերի մէջ, որ առիթ տուին ինձ ազա-
տելու Նէնէնի կեանքը և հանդիպելու հօրս: Թէ
առաջինը և թէ վերջինը առաջնորդեցին ինձ
դէպի ուղևորութիւն: Եթէ Նէնէն չը լինէր, ես
առիթ չէի ունենայ հօրս տեսնելու, իսկ եթէ
հօրս չը տեսնէի, ես գուցէ միշտ կը մնայի խա-
չագործների խումբի մէջ...

Գեռ արեւ չէր ծագել, դեռ տիրում էր վաղոր-
դեան մայրը: Գնալով դէպի մօտակայ գիւղը,
եւ իմ զլխում կազմում էի մի գեղեցիկ ծրագիր
մեր ապագայի մասին: Ես պատկերացնում էի սի-
նի հայրենիքը... իմ և հօրս վերադարձը...
մօրս և ծրարերիս ուրախութիւնը... և մեր խա-
ղաղ ու հանգիստ կեանքը հայրենական օջախի
կողքում...

Բայց ինձ տանջում էր մի ամենաթուլարին
հարց, թէ ինչ պէտք էր անել Նէնէնի հետ: Ես
գիտեի, որ նա ինձանից չի բաժանվի, ես զգում
էի, որ նրան թողնել չեմ կարող... Այդ հարցը
երկար զբաղեցնում էր իմ միտքը, երկար ես տա-
րուերվում էի զանազան մտածութիւնների մէջ:
Իմ սիրային առաքարկումս միմեանց հետ մրցում
էին երկու էակներ՝ — Նէնէն և Սառան: Որին
պէտք էր ընտրել...

Ճանապարհը, որ տանում էր դէպի մօտակայ
գիւղը, պէտք է անցնէր այն ձորի միջով, ուր
զանգվում էր խաչագործների բնակարանը: Այդ
պատճառով ես որոշել էի արեւածաղից առաջ,
առաւօտեան միջոցեան պահուն, անցնել այնտե-
ղից, որպէս զի նկատելի չը լինի:

Գեռ բաւական մոլոր էր, երբ հասայ այնտեղ:
Բայց իմ ուշադրութիւնը գրաւեցին որոտման
խուճ ձայներ, կարծես թէ արձակում էին արտ-
ճանախներ: Ես կանգնեցայ: Չայները լսվում

էին ուղիղ այն կողմից, որտեղ դանդաղ էր նը-
րանց ընտանաւորը: Հետաքրքրութիւնը մուրեց-
րեց ինձ: Ես բարձրացայ մի բլուրի վրա, այնտե-
ղի այնտեղից նայել: Իմ առջև բացվեցաւ մի հը-
րեղէն լճակ: Ամբողջ ձորը վառվում էր կրակի
մէջ: Հրեղեղ խաչագործների բնակարանից տարած-
վել էր անտառի մէջ: Ամառային տօթից ցա-
մաքած ծառերը այրվում էին:

Կրակի բոցերը դուրս էին հոսում խաչագործնե-
րի բնակարանից և տարածում էին նրա շուրջը
սարսափելի լուսաւորութիւն: Միջոցները այր-
վում էին: Մի կողմում անգամ էին թղթերի կի-
տավառ կապոյտները: Հրեղեղ ուղեւայնում էր կեղծ
գործի կեղծ արդիւնքը...

Հրեղեղ լուսաւորութեան միջից երեւում էին
զինված մարդիկ, որոնք, կարծես թէ, խուլար-
կութիւններ էին անում: Ոմանք կաւանաւորված
էին, շղթաների մէջ պահված էին, ոմանք փախ-
չում էին: Անտառի մէջ հետամուտ էին լինում,
որոնում էին փախաւորականներին: Միջոցեան մէջ
ընդդիմադրութիւններ էին կատարվում, այդ ժա-
մանակ լսելի էր լինում ատրճանակների ձայնը:

Ինչ էր պատահել: Ինչ էլ որ լինէր, այդ սոս-
կալի տեսարանը մի լաւ բան չէր գուշակում:
Ես մտածեցի հետաքրքիր: Այդ միջոցին լուսաւո-
րութիւնը աւելի տարածվեցաւ, կարծես, ամբողջ
հօրեղանը վառվում էր կրակի մէջ: Այժմ միան-

բան. նրան բողոքովին անմատչելի է ինքնաօգնու-
թեան գաղափարը, որ մօտ ժամանակներս արծար-
ծել էր պատուական «Մշակը», նա չէ օգնում իր
զարդանքին և այս բանը չէ կարելի արդարացնել
նրա նիւթական սուղ միջոցներով. մեր գիւղե-
րում կան հարուստ կալուածատէրեր, փողատէրեր,
որոնք առատութեամբ փող են ցրում չտալու-
թեան համար, իսկ իրանց զարդի համար խնա-
յում են կռակներ: Դ՛նչու: Արդ՛հետեւ զարդը
նրանց համար երրորդական նշանակութիւն ունի,
որովհետեւ նա նրանով չէ հետաքրքրուում: Ինքնա-
օգնութիւնը (сознательность) իսկապէս կարող էր
նիւթապէս անօգնական մեր տարրական զար-
դանքները: Բարեկրօնութիւնը, որ մեր մէջ զը-
տրուում է զեռ մասնական հասակում, չէ
կարող կատարելապէս ծառայել ինչպէս ու-
սումնարանական դործի ապահովութիւն, այս
բառի բուն նշանակութեամբ: Միում է միայն
ինքնաօգնութիւնը: Յաւելով պիտի խոստովանե-
վենք որ այս բանն էլ (զոհն՝ Ղարաբաղում) չէ
կարելի իրագործել. ինքնաօգնութիւն ասելով մենք
չենք հասկանում ամեն մի անհատական նուիրա-
տութիւն, որ մեզ մօտ խիստ սակաւ է պատա-
հում և մեր կարծիքով չէ կարող նպաստել ու-
սումնարանները ամբողջ գոյութեանը, այլ մենք
ուզում ենք ամբողջ հասարակական ինքնաօգ-
նութիւն. բայց ինքնաօգնութեան գաղափարը ժո-
ղովրդին հասկանալուց առաջ պէտք է նախ մի-
աւորացնել այդ ժողովուրդը, նրա հասարակական
շահերը, պէտք է ոչնչացնել այն առանձնացած
դիրքը, որ ունի ամեն մի անհատ հասարակական
գործերում և որի չնորձիւ նա միշտ մնում է չա-
րակամ, նախանձաղ և իր զրացու բարեկաւու-
թիւնը չը ցանկացող. ժողովուրդը ինքնաօգնու-
թեան մէջ էլ կը մնայ անտարբեր, որովհետեւ
նրա կարծիքով այդ օգնութեան մէջ հարկաւորու-
թիւն չը կայ, որովհետեւ ամեն մի անհատը մտա-
ծում է իրան օգնել, հետեւում է իր «ես»-ին: Դ՛նչու
իսկ Շուշիի հասարակութիւնը զուրկ է այդ գա-
ղափարը հասկանալու կարողութիւնից, ուրեմն
ինչ է կարելի սպասել գիւղական գոհնիկ ամբո-
խից, որ համեմատաբար աւելի ցած զարգացումն
ունի: Մենք պէտք է գիւղացուն, այսպէս ասած,
հաշտեցնենք մեր նոր գաղափարների հետ, պէտք
է հետեւաբար ցոյց տանք մեր բարեկարգ ուսում-
նարանները առաւելութիւն ու նշանակութիւնը,
պէտք է հասկանցնենք գիւղացուն ուսման նշանա-
կութիւնը, իսկ մենք զեռ միջոցներ և կարողութիւն
չունենք այս անելու. այդ ամենը նրան պէտք է
հասկանցնել նոյն իսկ այն ուսումնարանը, որին
նա հիմի համարեաւ ոչինչ է համարում: Լաւ կը լի-
նէր, եթէ հոգ. կառավարութիւնն ինքն իր կարո-
ղութիւնով բանար և պահպանէր ուսումնարան-
ներ. մենք շատերի պահանջողութիւն չենք ունե-
նայ: Լաւ նա է մի գաւառում ունեւալ երեք
կամ չորս բարեկարգութեամբ և ապահոված ուսումնա-
րան, քան ամեն գիւղում ունեւալ մի մի այնպի-
սի ուսումնարան, որի հիմքը պարտադէմ է տա-
լալիլ ամեն մի թոյլ պատճառից: Հոգեւոր կա-
ռավարութիւնը իր գործողութիւններով ցոյց է
տալիս, որ նա այս գործում ընդունել է վերելից

նայողի դեր, ամեն բանի համար պատասխանա-
տու չինելով ինքնական տեսչին. եթէ այսօր հինգ
գիւղական զարդ փակվին և ժողովուրդը անկա-
րող լինի վճարել ուսուցչի առնիկը, պէտք է տալ
տեսուչը. որտեղից. դա էլ մնում է անվճարել:
Կրթական գործը առաջացնելու համար հոգ. կա-
ռավարութիւնը անպատճառ պէտք է ունենայ մի
յայտնի ֆօնդ. առանց դրան շատ դժուար կը լի-
նի իրագործել իր բոլորին համար էլ համակրե-
լի լուսաւոր մարքերը: Իսկ եթէ գործերը շարու-
նակվին մնալ միշտ այս տեսակ դրութեան մէջ,
պէտք է Երևան, Գեղարքունիքի ինքնական տեսչից,
եթէ այսօր պ. Տէր-Գրիգորեանց հետանայ, իսկ
նրա տեղը բռնէ մի ուրիշը, նա էլ իր մնալ
կանգնած այս ծանր հանգամանքների առջև ա-
ռանց որ և է կարողութեան հետեւնել այդ
դժուարութիւնները: Յանկալի է որ մեր մամուլն
էլ մերթ մերթ զբաղվէր այս ծանրակշիւ հար-
ցով:

Ա. Բ.

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Բաբու 1 մարտի

«Մարդասիրական ընկերութեան» խորհրդական
ժողովը ուղղելով ձեռն այս հետեւեալ նամակը,
խնդրում է հրատարակել նրան յարգելով «Մշակ»
թերթի միջոցաւ, որովհետեւ շարժական զարդանք-
րի հարցը լինելով մեր մէջ նոր, ծանրակշիւ, մի
և նոյն ժամանակ վերին աստիճան օգտաւետ,
մամուլի մէջ ենթարկելի մանրամասն քննադա-
տութեան մանկավարժութեան գործին հմուտ և
նրան համակողմ անձանց կողմից, որպէս զի դա-
նով խորհրդական ժողովը շարժական զարդանքների
կազմակերպութեան ժամանակ վեց գիւղերում ու-
նենայ բազմակողմանի և հաստատ տեսչութիւն-
ներ, որ երաշխաւորութիւն է գործի յաջողութեան
և սխալմանց փորձութեան, որոնք անպատճառ
պիտի հանդիպեն այդ նոր և դժուար գործի իրա-
գործութեան ժամանակ:

«Մարդասիրական ընկ.» խորհուրդը ուղարկել
է հետեւեալ նամակը պ. վերատեսչին հայոց հոգե-
ւոր ծխական զարդացալ Արցախի թիւմ—Յովհան-
նէս Տէր-Գրիգորեանցին:

Հայոց «Մարդասիրական ընկերութեան» խոր-
հրդական ժողովը մի առանձին համակարգով
վերաբերելով ժողովրդի կրթութեան գործին,
ջերմ ուշադրութեամբ լսեց ձեր գրութիւնը, որը
վերաբերում է ձեր տեսչութեանը յանձնած թիւմի
վեց գիւղի մէջ զարդացական գործի կազմակերպու-
թեանը: Նոյն իսկ ուշադրութեամբ վերաբերվեց
ժողովը նոյն հարցին վերաբերեալ իր յարգելի ան-
գամ պ. Գ. Գրիգորեանցի հաղորդութեանը:

Ժողովը ի նկատի առնելով ձեր գրութեան մէջ
յիշած առանձին հանգամանքները, այն է համա-
ձայնեցնել Ամիրվան գիւղի շահերը, որ առաջին
անգամը դիմել է ընկերութեան օժանդակութեա-
նը, նրա տնտեսականից հայ գիւղերի շահերի հետ,
պահանջում էր այդ հարցը նորից քննել, ուշա-
դրութեամբ քննելով այդ ծանր խնդիրը, որին

խորհուրդը յատկացրել էր մի առանձին նիստ.
նա չը կարողացաւ նրա մասին մի բազմակողմա-
նի վճիռ կայացնել— ոչ ձեր առաջարկած միջոց-
ներին և ոչ էլ մեր յարգելի անդամակից պ. Գրի-
գոր Գրիգորեանցի հաղորդութեան համաձայն:

Գուց հակառակ էք Ամիրվանի մէջ առանձին
զարդ բանալու մտքին, համոզված լինելով որ
զբանով դուք կը պահպանէք Բեղարքանցի կենտ-
րոնական զարդի գոյութիւնը, որ գրիվելով այն
144 ր. օժանդակութիւնից, որ ստանում է ներ-
կայումս Ամիրվանցիներից, կը կարճէ իր գոյու-
թիւնը: Մի և նոյն ժամանակ դուք ինքնուր ձեռ
զբոլկեան մէջ անկարող եք կենտրոնական զը-
րդի բազմատեսակ պակասութիւնների վրա, այն
է աշակերտաց սակաւութիւնը նրանում, միւս գիւ-
ղերի աշակերտաց զարդը յաճախելու անյարմա-
րութիւնը ու դժուարութիւնները և այլն:

Իսկ պ. Գ. Գրիգորեանցը, տեսնելով կենտրո-
նական զարդի այդ բոլոր անյարմարութիւնները
սաստիկ ցանկութիւն է յայտնում օգնել ամիրվան-
ցիներին ինչպէս և իցէ, ենթադրելով, որ Բեղար-
քանցի զարդը չի գրվի իր գոյութիւնից, եթէ
Ամիրվանը ունենայ էլ իր սեպական զարդը:
Այդպէս ուրեմն դուք բոլոր էք պահպանել sta-
tus quo չը նայելով այն բոլոր անյարմարութիւն-
ներին, որ ներկայացնում է մեզ կենտրոնական
զարդի ներկայ գրութիւնը: Այդ հայացքի հետ
խորհուրդը համաձայնվել չէ կարող ժողովրդի
համար զարդը կարեւոր է ոչ միայն նրա համար,
որ նրա գոյութիւնը միայն յիշի գիւղումը, նա
գոյութիւն ունենալու իրաւունք ստանում է միայն
այն ժամանակ, երբ ժողովրդի մէջ նա խոր ար-
մատներ է ձգում: Դ՛նչ է նշանակում աշակերտաց
փոքրամասնութիւնը Բեղարքանցի զարդում մի
կողմից և Ամիրվանցի անընդհատ խնդիրները և
աղերսները միւս կողմից: Ոչ այլ ինչ, եթէ ոչ
այն, որ զարդանքն գործը այդ շրջանում վերին
աստիճանի անկանոն գրութեան մէջ է և որ պա-
հանջում է արմատական միջոցներ նրա վերանո-
րութեան համար: Ար և իցէ իրաւացի ցանկու-
թիւնը մենք բռնադատելու իրաւունք չունենք և
Ամիրվանցիներին օգնութեան կողմից չենք կարող
մերթիւլ քանի որ նրա ապացուցանում են, որ
Բեղարքանցի զարդը նրանց համար de facto գո-
յութիւն չունի:

Խորհուրդը կարծում է, որ դուք սխալվում եք
տեսնելով Բեղարքանցի զարդի անկանոն սկիզբը,
եթէ որ բացվի Ամիրվանցիների զարդը: Առաջինը
պիտի ընկնէ և առանց դրան էլ ինչպէս մի հիմ-
նարկութիւն, որ արհեստական գոյութիւն ունի,
միւս բոլոր գիւղերի շահերին հակառակ: Հշմարտ
է անկախ զարդ բանալու նրա քայքայման պատ-
ճառ կը դառնայ, բայց որովհետեւ այդ անխուսա-
փելի հանգամանքից կարող է մնալիլ ամենից
առաջ Բեղարքանցի, որ այդ շրջանում ամենա-
բազմամարդ գիւղերից մէկն է, որ ցանկալի չէ
խորհրդին, ուստի բոլոր գիւղերի ընդհանուր օգու-
նի համար խորհուրդը ամենից առաջ կարծում է—
ա) Հեռացնել կենտրոնական զարդի գլխաւոր ան-
յարմարութիւնը, որ անհրաժեշտ ստիպում է ար-
դարաց անցնել մի օրում ահալին տարածութիւն,
հրեհի բոցերի հետ, երբ մեզ հասցրին խաչադող-
ների բնակարանի մօտ: Երեւում էր, որ իրանը,
խաչադողները, կրակ էին տուել այդ բնակարա-
նին, որպէս զի միտքի մէջ անհետացնեն իրանց
արհեստի նշանները:

Երբ բոլորովին մօտեցայ, տեսնում եմ խաչա-
դողներից մի քանիսը շղթայակապ պահվում են
զինուորական ձեռքում: Ամբողջ ձորը չըջաղաւա-
կած էր բաղնիքի պահպանակներով: Այսու ամե-
նային, մի քանիսին յաջողվել էր փախչել, թէև
ոտայինութիւնը վրա էր հասել այն ժամանակ,
կեր բոլորը զեռ քնած էին:

Քաւոր Պետրոսը նոյնպէս կաշանաւորների թը-
ւումն էր. նա խիստ անխուս՝ կերպով կանգնած
էր իր շղթաների մէջ և նոյնպէս հպարտ էր, որ-
պէս միշտ: Առաջին անգամը չէր, որ նրա հետ
պատահում էին այսպիսի «խաղեր»: Նա իր կեան-
քում գուցէ հարկւր անգամ գործ էր ունեցել ու-
տիկանութեան հետ...: Երբ տեսաւ ինձ, խիստ
զածան կերպով նայեց իմ վրա և ոչինչ չը խօ-
սեց: Բայց ևս նրա թուրաւոր հայացքի մէջ կար-
գացի այդ խօսքերը. «Գուց էլ, Մարգար, դաւաճա-
նեցիր ինձ...»

Խաչադողները անառաւ մէջ տեսնել մինչև կէս-
օր: Խաչադողներից ոմանք, անակի ստորերի-
րեայ գաղտնի ճանապարհով դուրս էին եկել և
անհետացել էին ծառերի ու թուփերի մէջ: Նրանց

երբեմն էլ վառ եղանակին և մի և նոյն ժա-
նակ ազատել թէ իրանց և թէ գիւղացոյ ծանր
ծախքերից, որոնք կը հարկաւորվէին առանձին
զարդ պահելու համար իւրաքանչիւր գիւղում
Այդ իրագործելու համար հարկաւոր է—

1) Հիմնել զարդանքի վեց գիւղի համար զեռ
գիւղի շարժական զարդանքների օրինակով, այսինքն
սուղ յիշեալ գիւղերին երկու կամ երեք ուսուցչի
որոնք իւրաքանչիւր տարի կարողանային
4—6 ամիս:

2) Նշանակել այդ վերջիններին 500-ական
ուսիկ, որ այդպիսով կարելի լինի ունենալ
զարգացած և իրանց կողմանէ համապատասխան
մանկավարժներ:

3) Պարտաւորել գիւղական հասարակութեան
որ նրանց 554 տուն իրանց կամքով վճարել
մօցնել Մարդ. ընկ. դանձարանը 1 ր. 20 Կ.
բաքանչիւր ծովից, այսինքն ընդամենը 664 Կ.
80 Կ. որոնք կը հարկաւորվեն երկու ուսուցչի
վարձելու համար, իսկ մնացեալ 335 ր. 20 Կ.
օժանդակել ընկ. դանձարանից: Ընկերութեան
ընդունում է իր վրա գործի մասնավարժութեան
կարգադրութիւնը: Մի և նոյն ժամանակ գիւղ-
ական հասարակութիւնները տալիս են բնակարան
վաճակներ, երբ ուսուցչից իրանց գիւղումն
անկում:

4) Խորհուրդը նշանակում է զարդի յատ-
կան կազմակերպութեան համար իր մանկա-
րար տեսնեցին, որը մասնաւորապէս ծան-
այդ տեսակ հիմնարկութեանց կազմակերպութեան
հետ, սկզբում պարտաւորեցնելով նրան հետեւի
սատովութեան կղանակին: Ահա հիմունքը, որ
վրա խորհուրդը Մարդ. ընկ. կանխում է կազ-
մակերպել զարդական գործը ձեր շրջանում:

Բացի անտեսական նշանակութիւնից իւրաքա-
նչիւր գիւղի համար ծախքերը կարճելու մտքը,
տեսակ զարդանքներ արդիւնաւոր կը լինեն և մ-
կալարժեքական կողմից, ըստ որում լաւ է ունե-
կրթողական ցննդ ունեցող մի հմուտ մանկալ-
որ պարապել 6 ամիս և ստանար 500 բողոք-
թէ անուս, հազիւ դադարէ և քիչ զարգացած
ր. ուսիկով ուսուցիչ իւրաքանչիւր գիւղում
և նոյն ժամանակ այդ տեսակ զարգացած ման-
կավարժ միշտ ընդունելութիւն կը գտնի դիւրա-
շրջանում, որ մեծ հաւատարմութիւն է ցոյց տա-
լիս զեպի ինտելլիգենցիան:

Աւելի լաւ է, որ ուսուցիչը ինքը՝ գնայ իր
շակիւրաների մօտ, քան թէ այդ վերջինները
թարկվին ամենօրեայ երթևեկութեան ժամանակ
սաստիկ քամիների և ուրիշ դժուարութիւններ
Յոյս ունենք օգնութիւն գտնել այդ նոր գ-
մէջ ձեր կողմից և խմանալ ձեր կարծիքը
բացվելի զարդի կազմակերպութեան համ-
տական թերութեանց մասին: Խորհուրդը
նում է այդ գործի վրա դարձնել թիֆլիսի
երկրորդական ընկերութեան ուշադրութիւնը
Իսկ Ամիրվանում առանձին զարդ բանալու
ցը առ պիտի մնում է առանց վերջնական
Նախագահ խորհրդական ժողովրդ Գ.
մա յ և ա ն ց . Անդամ-Առնեալդիր Մ. Պ.
վ և ա ն ց :

գտնել չը կարողացան: Կաշանաւորների
բացի ինձանից, չորս հոգի էր:

Հրեհն արդէն բոլորովին լախել էր այն
կարանը, որ մօտ մի տարի եղել էր ամեն
սարսափելի շարադրութիւնների: Երբ ամեն
վերջացած էր, մեզ սկսեցին տանել զէպի
կայ քաղաքը: Մի բան, որ իմ իտրտանեան
թեզն չաղջիլ, դու դարձեալ մնացիր անտէր:
Երկիւղը և յուսահատութիւնը, որ այդ
զէպերում տիրում են յանցաւորի օրտին, ի
լորովին զգալի չեղան: Կարծես թէ, ես
ված էի, թէ հարկաւոր էր որ այսպէս լինէր
այն ճանապարհը, որ ես բռնել էի, ինձ պի-
վէի և իմ տանջանքներով քաշէի իմ դործա-
քերը:

Երեք օրից յետոյ մեզ հասցրին մերձակ
զաւր և փակեցին բերդի մէջ: Գիւղի էր:
մի անկիւնում, թեք ընկած յարդի վրա,
իմ ընկերներից, տխուր մտածութիւններով
տանջվում էի ես: Հազիւ-հազ ինձ համար
կեանքի մի նոր առաւօտ, հազիւ-հազ ինձ
ված էի համարում մի անբարոյական հասարակ-
թիւնից, հազիւ-հազ սկսվում էր ինձ համար
զար ասորուստի մի նոր եղանակ, և ահա
հանգամանքներ ինձ ձգեցին մի նոր դժբախ-
տի:

գամից բոցավառվելով, արվում էին չոր խոտի
դէպերը, որ խաչադողները հաւաքել էին իրանց
ջորինների համար: Լուսաւորութիւնը հասնում էր
մինչև այն բլուրը, որի գագաթին կանգնած էի
եւս: Իմ պատկերը մի անշարժ արձանի նման նը-
կարված էր բլուրի բարձրութեան վրա: Ստորո-
տից լսելի եղաւ մի ձայն:

—Գա էլ մեր ընկերն է...
Իսկոյն վրա հասան մի քանի դիմված մարդիկ
և կաշանաւորեցին ինձ: Երկրորդը արդէն յայտ-
նի եղաւ ինձ, ևս ընկալ ծուգակի մէջ...

Խաչադողը, որ մասնեց ինձ, մի և նոյն անձն
էր, որին կոչում էին «Հէլի ականջ»: Նրան փախ-
չելու ժամանակ ճանապարհից բռնել էին և յետ
էին բերում: Այդ մարդը յայտնի էր ամբողջ խում-
բի մէջ իր վատութիւններով: Ես զարձայ նրան,
ասելով.

—Չես ամաչում...
—Գու պիտի ամաչես, պատասխանեց նա լըր-
բարբար,—դու մասնեցիր մեզ, և կարծում էիր,
թէ ինքը արդէն կը մնաս...
—Ե՛ս մասնեցի ձեզ...

—Այո, դու, ապա ո՞ւր:—Գու խաբեցիր մեզ,
դու հեռացար մեզանից, դու թաղնիկացի ծերունի
ձկնորսի խրճիթում, որտեղ թաղցրել էիր և այն
աղջկան, որին յանձնել էին քեզ սպանելու հա-
մար...

—Այդ դու որտեղից դիտես:
—Ես երկու ամբողջ դիւերներ խաւարի միջից,
ձկնորսի խրճիթի լուսամտաներից նայում էի ձեզ
վրա... և այդ հրեհը պիտի կատարէր այնտեղ...
և ձեզ բոլորիդ պիտի այրէինք կրակի մէջ... բայց
դու, անսպասելի, աւելի ճարպիկ գտնվեցար մեզա-
նից... մի քանի համար մասնեցիր մեզ...

Ես ոչինչ չը պատասխանեցի. ինձ աւելի ծանր
էր լսել նրա հայտնաբերելի և անպատիժ թող-
նել նրան. քան թէ այն կապանքները, որ այդ
բողոքում կաշխաղեղ էին ինձ: Սկսեցին մեզ տա-
նել զէպի խաչադողների բնակարանի կողմը:

«Հէլի ականջի» խօսքերից երևաց, որ իմ բացա-
կայութիւնը կատարածքի մէջ էր ձգել ընկերնե-
րիս. նրանք սկսել էին որոնել ինձ և գտել էին
ձկնորսի խրճիթում: Նշեմք ինքնապէս տեսնելը
աւելի շփոթեցրել էր նրանց, մանաւանդ բաւար
Պետրոսին, որին ես հաւատացրել էի, թէ սպա-
նել եմ այդ աղջկան: «Հէլի ականջին» յանձնված
էր. եղել զաղաղի: Ես իմ գործողութիւն-
ները վրա, տեղեկութիւնների հաւաքել, մինչև ըն-
կերութիւնը կը պարզէր այդ միջին և կենտոն
հարցը և կը տար իր վճիռը իմ մօտին: Բայց ես
ինչով էի առիթ տուել նրանց մտածելու, թէ ես
եմ մասնել նրանց.—այդ ես հասկանալ չը կարո-
ղացայ:

Արեգակը իր առաջին ճառագայթները խառնեց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ
պատճառով էժան ծախվում են 5 կտոր
գետին, Նաբեբեժնայա փողոցի վրա նոր
կամուրջի մոտ: Տեղեկանալ **ԱՆԳԼԻԱ-**
ԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԻՋ: ՆՈՅՆ
պատճառներով ծախվում են կիսագնով ՀԱ-
ԳՈՒՍՑ, տրիկո, բրդե գՈՒՂԱՆԵՐ և այլն:
Նոյն տեղ կայ մեծ քանակությամբ երկա-
թէ գՐԻՉՆԵՐ, երկաթէ ՄԱՀԱՎԱԼՆԵՐ, ԹԵՑ
1-ն հունձի, չը թրջվող վերարկուներ, ԹԱՄ-
ԲԵՐ կանանց և տղամարդկերանց, ՍԱՊՈՆ և
այլն 25% առելի էժան քան թէ ուրիշ
տեղ: Գլխերին սապոն ֆունտը 40 կ.:
Հնդկական բրինձ 8 կ. ֆունտը:
1—8

ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
(ԿՈՒԿԻՍ, ՍԻՄԵՆՈՎՍԿԻ ՓՈՂՈՑ, Տ. ՀԱԽ-
ՎԵՐԴԵԱՆԻ):

Հիւանդները ընդունվում են ամեն օր:
Առաւօտեան 9—10½ ժ. ՆԱԽԱՍԱՐ-
ԳԵԱՆ—վիրաբուժութեան և վնասական հ.
և ՐՈՒԳՎՈՎՍԿԻ—կանանց, երեխայոց և ներ-
քին հ. 10½—12 ժ. ՇԱՀԱՅԻՉԵԱՆՑ—ներքին
հ. 12—1 ժ. աչքացաւի ԼԱՐԻՈՆՈՎ—ամեն
օր, բացի չորեքշաբթի և կիրակի և ԲԵՑԻ-
չորեքշաբթի և կիրակի:
Երեկոյեան 5—7 ժ. ՈՒՇԱՎՈՎ—երե-
խայոց և կողմի հ. երեքշաբթի, հինգ-
շաբթի և շաբաթ: Ձգային և հոգեկան հ.
և էլեկտրա-բուժութեան ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆՑ—
ամեն օր և, իբր խորհրդակից նոյն հիւան-
դութեանց համար, Ա. ԲԱՐԱՅԵԱՆ—ե-
րեքշաբթի և շաբաթ: Ընդհանուր բժշ-
կական խորհուրդ (կոնսուլտացիա)—
երեքշաբթի և շաբաթ 7—8 ժամը երեկո-
յան: Գիշերօթիկ հիւանդներ:
Վարձ՝ խորհուրդ երթեկներին—50 կոպ.
կօնսուլտացիան—3 բուր. չքաւոր-
ները—անվարձ:
Հիւանդանոցի կառավարիչ ՆԱԽԱՍԱՐԿԵԱՆ
(ընտրվում է նոյն հիւանդանոցում):
Շուտով կը բացվի հիւանդանոցում և Ձրա-
բուժական բաժանումն, որին կը ձեռնարկի
բժիշկ ՏԵԼԵՎՈՎ:
(չոր. ուրբ.)

Տպագրութեամբ լոյս տեսաւ՝

ՈՒՍՈՒՑԻՉ

ՌՈՒՍՍՑ ԼԵՁՈՒԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
Հայոց ուսումնարանների համար, յորի-
նեց Զ. ԳՐԻԳՐԵԱՆՑ
„Учитель русского языка.“
Այս գրքի մէջ կան ուսուցիչի գեղագրու-
թեան օրինակներ, երգեր, փոքրիկ և թեթեւ
հատուածներ:
Գինն է 20 կ.—ըստարով 16 կ.
Վաճառվում է՝ въ Кавказск. книжн.
торговлѣ Зах. Грикурова вѣ Тиф-
лисѣ.
2—10

ՐԱՅՅԻ
ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԽԱՀԱՎՈՐԴԻ
ՅԻՂԱՏԱԿԱՐԱՆ
ԱՌԱՋԻՆ և ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ
Գինն է 1 ր. 20 կ.
Վաճառվում է
„Մշակի“ խմբագրատանը, — „կենտրո-
նական գրադատանոցում“ — կովկա-
սեան գրադատանոցում — ա. Շահ-
վերդեանի պաշտօնում, — ա. Ս. Շա-
հինեանի և ՏԵՐ-ՅՈՒՆԻՔԻՆԵԱՆԻ ծխա-
խոտի մագաղաններում:
Օտարաբարդացիք կարող են զի-
մել այս հասցեով:
Въ ТИФЛИСѢ. Редакция „МШАКЪ“
Меликъ-Акоплян.

ВЪ РЕДАКЦИИ
„МШАКЪ“
ПРОДАЕТСЯ БРОШЮРА
НА РУССКОМЪ ЯЗЫКѢ
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМІЯНЪ.“
Цѣна 25 копѣекъ.
Сов. Григоріа обр. 1904 г.

ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ՅԱԽԵՐԸ
ՊԵՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ ԲՈՒԴՈ՝
Այդ գինին շատ դուրեկան համ ունի, 25 տարի շարունակ գործ է ած-
վում հետեւեղ զիպածներում. ԱՌՐՈՒՍԻ ԲՅԱԿԱՅՈՒԹԵԱՆ, ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ
ՅԱԽԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՆՈՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ժամանակ:
Պէպսին „Բուրձ“ ճանաչված է փարիզի բժշկական Ալազեմիայից և արժա-
նացաւ առաջին մեդալների ֆուրձի աշխարհահռչակում 1867 թ. ՎԻԵՆՆԱՅԻ
1873 թ. ՖԻԱԿԷԼՖԻԱՅԻ 1876 թ. և ՓԱՐԻՅԻ 1878 թ.:
Paris: Hottot-Boudault, 7, Avenue Victoria.
Կիսաւոր պահածութիւնով Բարձրագոյն հաստատված կովկասեան ըն-
կերութեան գեղատան ապրանքների վաճառման:
Դէպօ Շահ-Պարոնեանցի, Գրիգորի և այլ գեղատներում:

ԿՈՆԿՈՐԴԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սնանկացած ԳԱՎՐԻԼ ՇԱԿԻՆՈՎԻ գործերի վերա-
բերութեամբ հրաւիրում է վերջինի պարտատէրերին ընդհանուր ժողովի ներկայ մարտի
22-ին, որ լինելու է կօնկուրսի բնակարանի մէջ, Իրակլիեփսայա փողոցի վրա, Արտագովի
տանը № 8, երեկոյեան 6 ժամին Կօնկուրսի անդամների վարձատրութեան հարցը վճա-
րու համար: Կօնկուրսի ՆԱԽԱՎԱՀ ՄԵԼԵԳԻ:

ԿՈՆԿՈՐԴԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սնանկ պարտատէր ԳԱՎՐԻԼ ՇԱԿԻՆՈՎԻ գործերի վերա-
բերութեամբ հրաւիրում է ցանկացողներին գնել մասամբ և քանակութեամբ 47,000
գինովին պատկանող ապրանքների 172 կապոյնները, որոնք իրանց տեղը արժեն
1-ի, զիստաւորապէս Ս. Պետերբուրգի և Մոսկվայի չրթեր: Ապրանքները գտնվում են
Թունով եղբայրների պահեստի մէջ Սադովայա փողոցի վրա: Ապրանքները կարելի է տես-
նել ամեն օր Թունովների պահեստի մէջ, իսկ պայմանների մասին կարելի է իմանա-
լուրդանել շաբաթ հինգշաբթի և շաբաթ օրեր 6—8 ժամը երեկոյեան, Կօնկու-
րսի բնակարանի մէջ, Իրակլիեփսայա փողոց, ա. Արտագովի № 8:
Կօնկուրսի նախագահ ՄԵԼԵԳԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԻՑ
ՊԱԼԵՍՏԻՆ
ԱՆԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՁԵՆՆԱԿԻ իբրև օժանդակ սուրբ պատմութեան
Գրքի վերջը գտնվում է համառոտ ծանօթութիւն սուրբ պատմութեան մէջ
յիշված բոլոր երկրների:
Գինն է 20 կՊԷԿ
Գուճարով կանխիկ առնողներին կը լինի 10—20% զիջումն:
Իմ միւս աշխատանքներն են՝ 1) „Աշխարհագրութիւն Հա-
յաստանի“, 2) „Հայրենագիտութիւն“, 3) „Քարտէզ Հայաստանի“
գտնվում են Կովկասեան և Կենդրոնական գրադատանոցներում:
ԱՒԵՏԻՔ ՏԵՐ ՅԱԿՈՎԵԱՆՑ:

ԳԱԼԵՐԵԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴՎՈՐՅՈՎԱՅԱ ՓՈՂՈՑ
ՊԱԼԵՍՏ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.
СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ
Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, Վիեննայի ԹՈՆԵԹ Ֆար-
բիկայի ՄԵԼԷԼԻ ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵՉՈՎ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների հա-
մար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ ԹՈՂՈՎ, Բէլգիայի ԱՊԱԿԻ-
ՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՍՈՂՈՆ քար, ԹՈՒ-
ՋԵԱՑ ԱՄՆԵՆԵՐ էմպոյի նիթրում ԳԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ:

**Մ. Ն. ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆ-
ՐԱԾԱԽՍ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**
ԱՐՄԵՆԱՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՈԼԻՉԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ, ՏՈՒՆ № 13
ՎԻԵՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 բուրձուց զիւժինը, բազմա-
թոռներ 6 ր., զիւժիններ 12—25 ր., կաշի, մանկական աթոռներ և այլն:
ԱՆԿԱԿԱՆ ԵՒ ՖԱՆՏԱԿԱՆ ՄԱՀԱՎԱԼՆԵՐ, ճանապարհի մահաւանդներ, պա-
հարաններ, ծաղիկ սամպարներ: Ձեռնգաններ 2 ր. 75 կ. և 26 ր., սակի-
թած ձեռքի և ուրիշ կաշեկու, ճանապարհի սամպարներ, ձԱՆԱՊԱՐԶԻ ԱՐԿԻՆ 3
ր. 50 կ.—30 ր.:
Սամպարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կօֆէյնի, թէյամաններ, ութ-
ներ և աղալու գործիք, գերմանական էմպոլ ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐ-
ՄԱՐԻՈՆԻ ամաններ 40 ր., երես լուսանկար պղնձէ և ժետի ամաններ:
ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., առաւելորդ հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան
մետաղների մոմակներ 1 ր.—15 ր., սեղանի գալներ 4 ր. 50 կ. և թանկ
թէյի զգալներ Ֆրանկի, մելիորի, լիհական և բրիտանական արծաթից առե-
կէժան, քան թէ ուրիշ տեղ, զանազան, պատառաքաղեր 2 ր.—26 ր.:
ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՈՆԿԻՆԵՐ կանանց և մարդկերանց, հոգեւորների կանանց
մարդկերանց, ուսանական և անգլիական պողպատէ և երկաթէ զանազան, յայտ-
նի գործարանները, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ
10 կ. և առելի:
ԲԵՎՈՂԱՆԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պարտոններ բէլգի-
ների համար, հրացան 6 ր. և առելի, զանազան վիշապներ, կշիռներ: Անդ-
լիական և ամերիկական կշիռներ 50 կ.—2 ր. արշինը:
Մշտապէս ունեւ 10,000 ֆ. ԹԵՑ Պապով եղբայրների, կաֆէ ՄԻՒԵԼՍՈՆԻ
թէյի համար խմորէյն էյնեմի, ԲԵՐԳԱՐԻԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (ՕՐԷ-
կօյն) ծխող փողիք, պուդրա, գլխերինի սապոն և այլն, առելի էժան քան թէ
ուրիշ տեղ:
ՄԵՆ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ զաւանդէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկ-
ղի գրամարկ, քաւիներ, սանդիներ, շապիկներ, լայիկ ձեռնոցներ կանանց, զինու-
թական զամէի ձեռնոցներ, զարուս, թէյեր, բրձիկ և մարմարիժի թանաքամա-
ներ, մոխրամաններ, զրիչներ, մոտաններ, զրջակոթներ, սուրղուչ, փոստի թուղթ,
ծրարներ և այլն:
ՄԵՆ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գի-
նու և զեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ: Վեր-
յիշված բոլոր առարկաները ունեւ մեծ քանակութեամբ և ստանում եւ՝ ԱՐՏՈ-
ՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս: Առաւորականներին զի-
ջումն և առանձին պայմաններ: Օտարաբարդացիք կարող են զիմել. ТИФЛИСѢ.
М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.